

ԱՐԱՐԱՏ 73

Սուրեն Բաղդասարյան

# ԱՐԱՐԱՏ 73

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՈՍԿԵԴԱՐԸ



ԵՐԵՎԱՆ  
2023

ՀՏԴ 796.332(479.25)

ԳԱՄ 75.578(5C)

Բ 242

Բարդասարյան Սուրեն

Բ 242 Արարատ 73: Հայկական ֆուտբոլի ուշինարք / Ս. Բարդասարյան - Երևան, 2023 - 544 էջ:

ԽԱՀԱՄ ֆուտբոլային ուժեմ թիմերի կողմին «միջակի» համբավ ունեցող «Արարատ» 1973-ին դարձավ երկրի չեմպիոն և գավաթակիր: «Արարատ 73»-ին սկսեցին սիրել ոչ միայն գրանցած արդյունքների, այլև ցուցադրած կախարդական ֆուտբոլի համար: «Արարատի» «Շնկե 1973-ի» հանդիպումների ռեպորտաժները հայկական հեռուստատեսությամբ և ռադիոյով հաղորդել է Սովոր Բարդասարյանը: Անվանի մելքոնարանը հուշերն ու պատմությունները շարադրել են գրքում, որում մամրամասն ներկայացված է հայրածնակ սանոր շամսապարհը: Ականատեսի թօնիմությունը: Նկարագրված է, թե ինչ դժվարություններով ու գրկանցներով է անցել «Արարատն» ու հասել այս անսախադեպ հաջողությամբ:

ՀՏԴ 796.332(479.25)

ԳԱՄ 75.578(5C)

Գիրքը հրատարակվել է  
Արթուր Սողոմոնյանի աջակցությամբ:

Գործընկերներ

 to.sport  
fm 96.3

 BONITASPORT

ISBN 978-9939-967-12-7

Սուրեն Բարդասարյան «Արարատ 73. Հայկական ֆուտբոլի ուշինարք» © 2023, «Հյու Մեգ» ՍՊԸ  
Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Հյու Մեգ» ՍՊԸ-ին:

## Բովանդակություն

Հերիաթային «Արարատ 73»-ը և ամենաերջամիկ մեխարանը	7
«Արարատում» յուրաքանչյուր ֆուտբոլիստ ամհատականություն էր	15
Թիմ, ոչ թե կազմ	19
«Արարատ 73»-ի ուշերուց թիմը	24
Դրույ 1 Տեմպիուսական սկիզբ	30
Դրույ 2 Հանդիսականների ռեկորդային ծով այլր	38
Դրույ 3 Սիմոնյանի թիմը՝ Սիմոնյանի թիմի դեմ	44
Դրույ 4 Առաջին սայթաքումը	62
Դրույ 5 Երուարդ Մարգարուն էլ սկսեց խաղալ	70
Դրույ 6 Խոշոր հաշվով առաջին հաղթանակը	82
Դրույ 7 Դարձյալ ցավայի պարտություն	86
Դրույ 8 Պարտություն «ուժե թոփից» առաջ	90
Դրույ 9 Նիկոլայ Ղազարյանի բննեֆիար	94
Դրույ 10 Նորից խոշոր հաշվով հաղթանակ	110
Դրույ 11 «Արարատի» 150-րդ հաղթանակը	116
Դրույ 12 Արարատցիների հաղթարշավն ընդհատեցին թրիխցիները	126
Դրույ 13 Վերջապես «Արարատը» դարձավ միանձնյա առաջատար	132
Դրույ 14 Երկու ճակատով	140
Դրույ 15 Կտրուկ պոկում հասարակածը հատելուց առաջ	150
Դրույ 16 «Արարատը» շարունակեց մարել ԲԿՄԱ-ի	
Նկատմամբ հաղթանակների պարտքը	160
Դրույ 17 «Արարատը» Երկրորդ խաղաշրջանն էլ սկսեց հաղթանակով	168
Դրույ 18 Վիրտուոզ խաղ և փայլուն հաղթանակ	
Թրիխցիի «Դինամոյի» նկատմամբ	178

Գլուխ 19 «Արարատը» հաղթահարեց Նաև չեմպիոնի արգելքը	184
Գլուխ 20 «Դնեպրը» ընդհատում է «Արարատի» վերելքը	194
Գլուխ 21 Պատմությունը Երբեմն կրկնվում է	198
Գլուխ 22 Բացասրություն կենտկոմում	204
Գլուխ 23 «Արարատի» ամենամեծ ողբերգությունը 1973-ի մրցաշրջանում	212
Գլուխ 24 «Արարատը՝ Եզրափակիչում	220
Գլուխ 25 «Արարատն» առաջատարի դիրքը գիշում է Կիւկի «Դինամոյին»	228
Գլուխ 26 Մղճավանջն ավարտվեց	234
Գլուխ 27 «Արարատի» չեմպիոնական հաղթարշավը	238
Գլուխ 28 Նորից հաղթանակ չեմպիոնի Նկատմամբ	250
Գլուխ 29 Չափից ավելի Նրբանկատ Նիկիտա Սիմոնյանը	262
Գլուխ 30 Եվս մեկ հաղթական քայլ չեմպիոնության ճանապարհին	270
Գլուխ 31 Ցավալի սայթարում գավաթի խաղարկության Եզրափակիչից Երեք օր առաջ	276
Գլուխ 32 «Արարատն» առաջին անգամ ԽՍՀՄ գավաթակիր	282
Գլուխ 33 «Արարատը» հաղթահարեց հոգեբանական ևս մեկ ծանր արգելք	310
Գլուխ 34 Անուրջները կարող էին խորտակվել	318
Գլուխ 35 «Արարատի» Նախավերջին ծանրագույն փորձությունը	324
Գլուխ 36 Շեմպիոնական վերջին ակորդը	332
Գլուխ 37 Խչը՝ Նիկիտա Սիմոնյանը հեռացավ «Արարատից»	344
Գլուխ 38 «Արարատ 73»-ը Եվրոպական գավաթների խաղարկություններում	358
Գլուխ 39 Կյանքը 1973-ից հետո	418
 Կարծիքներ «Արարատի» մասին	428
«Վիճակագրություն	436

# ԴԵՐԻՎԱԶԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ 73»-Ը ԵԿ ԱՄԵՆՎԵՐԺՎԱԿԻ ՄԵԿՆԱՐԱՆԸ



Սուլբան Բաղդասարյան

Ես այս երջանիկ մեկնարանն եմ, որը «Արարատ 73»-ի փառահեղ հաղթանակների անմիջական վկան դարձավ: Հենց «Արարատ 73»-ի շնորհիվ հաստատվեցի որպես մեկնարան, քանի որ դժվար էր փոխարինել ֆուտրուլասերների կուտքը դարձած մեկնարան Լևոն Դանիելյանին, որը կյանքից հեռացավ 1972-ի հունվարին, ուժերի ծաղկման շրջանում, երբ ընդամենը 42 տարեկան էր: Հաստատվեցի, որովհետև «Արարատն» այդ տարիներին փայլուն երրություններ էր ունենում և ոգևորված ու հաղթամակների շնորհիվ բարի դարձած, նույնիսկ քծախմնդիր ֆուտրուլասերները մեկնարանին զերծ էին պահուած դժգոհություններից ու անողոր քննադատություններից: Խմ բախսոր բերեցնաև, որ ճայնս ու առողջանությունս թիջ էին տարրերվուած Լևոն Դանիելյանի ճայսից ու առողջանությունից: Առաջին անգամ մեկնարանական սեղանի մոտ նստեցի 1971-ի սեպտեմբերի 6-ին, երբ «Արարատը» «Հրազդան» մարզադաշտում ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնության հերթական տուրում ընդունեց Տաշքենդի «Պահստակորին» ու դրամատիկ պայքարում հաղթեց 3-2 հաշվով: Հենց սկզբից «Արարատի» հետ սկսեցի մեկնել արտագնա հանդիպումների՝ ռեպորտաժներ վարելու:

Առաջին ուղեկորությունս Բաքուն էր: 1971-ի սեպտեմբերի 10-ին «Արարատը» հյուրընկալվել էր «Նևթշին»: Հանդիպումն ավարտվեց ոչ-որի: Արարատցիները շատ ոգևորված էին, որովհետև Բաքվում խաղալը հեշտ չէր՝ առաջին հերթին նկատի ունենալով կողմնակալ մրցավարությունը: Չեմ մոռանում, որ այդ խաղից հետո հենց հանդերձարանում տղաները պարզեատրվեցին 150-ական ոություն: Դա այսօր ծիծաղելի է թվում: Խնձնից առաջ Լևոն Դանիելյանը մեկնում էր միայն Թրիլիսի, Բաքու, Քուբային՝ ռեպորտաժներ վարելու: Դանիելյանը չէր մեկնում ԽՍՀՄ այլ

քաղաքներ, քանի որ, մասնագիտությամբ վիրարույժ լինելով, աշխատանքով ծանրաբեռնված էր: Իմ պարագան այլ էր. աշխատանքս հաջողությամբ համատեղում էի ուղևորությունների հետ: Ավարտել էի պոլիտեխնիկական ինստիտուտի կիրեռնետիկայի ֆակուլտետի ավտոմատիկա և հեռուստամեխանիկա բաժինն ու ինժեներ էի աշխատում Էներգետիկայի ընագավառում: «Արարատի» փայլու երայիշերի շնորհիվ այն ժամանակ ամբողջ ազգը ֆուտրուասեր էր դարձել, և որևէ մեկը չէր կարող շահարկել աշխատանքից իմ բացակայությունները:

1973-ի մրցաշրջանը բացատիկ էր: «Արարատն» արդեն իշխում էր ԽՍՀՄ ֆուտրուում, ամենուրեք նրան ցնությամբ էին ընդունում: Մեր հրաշալի թիմի մասնակցությամբ հանդիպումներն ամեն մի քաղաքում անցնում էին Եվր-Ենցոն տրիբունաներուն: Դարձել էի թիմի ոչ պաշտոնական անդամներից, կարող էի մոտիկից ծանոթանալ «Արարատի» խոհանոցին, իմանալ նրա լույսն ու ստվերը: Միշտ ներկա էի խաղից առաջ ֆուտրուլիստներին տրվող հրահանգներին: Դա հնարավորություն տվեց միշտ և ավելի խորը ընկալել ֆուտբոլը՝ խաղի տակտիկական նրբություններով, առավել ևս որ «Արարատը» հերթականությամբ մարգեցին խորհրդային լավագույն մասնագետներ Արտյոմ Ֆայանը, Ավեքսանովը Պոլոսմարյովը, Նիկոլայ Գյերովը, Նիկիտա Սիմոնյանը: «Արարատի» երայիշերը Խորհրդային միությունում բոլորի ուշադրության կենտրոնում էին: Մեր թիմն արտիստիկ ֆուտբոլ էր ցուցադրում: Նրա արագ, կոմբինացիոն, հարձակողական ու ստեղծագործական խաղը գեղագիտական հաճույք էր պարզեւում բոլորին: Իգուր չէր անվանի մեկնարան Նիկոլայ Օզերովն ասե, որ խորհրդային չեմպիոնների մեջ «Արարատն» իր գրավիչ խաղանուկ համելիորեն տարբերվում է բոլորից:

Գրեթե անհնար էր դիմականի «Արարատի» փոթորկալից գրոհներին, որոնց մասնակցում էին ոչ միայն կիսապաշտպանական և հարձակողական եռյակները, այլև եզրային պաշտպանները: Անշափ դժվար էր կոահել հարվածի գլխավոր ուղղությունը: Գրոհները տարվում էին եզրերով, կենտրոնով: Հրաշալի էին գուգորդվում կարծ ու միջին տարածության, նաև երկար փոխանցումները: Դեպի դարպասը հարվածներին հետևում էին հարվածներ տարբեր դիրքերից ու տարածություններից: Ըստ որում, հարվածում և գոյի հեղինակ էին դառնում շատերը: «Արարատը» հմտորեն կարողանում էր փոխել խաղի ուժեմքը: Կստահորեն վերահսկելով

գնդակը՝ դաշտի կենտրոնում հանգիստ խաղարկումներից հետո հետևում էին դեպի մրցակցի դարպասը լացիկ մեղքումները և պոռքեկումները:

«Արարատին» փայլուն հաղթանակներ բերեցին ֆուտրովիստների անհատական բարձր վարպետությունը, ֆիզիկական ու հոգևոր հիանալի պատրաստությունը, հմուտ մասնագետների տակտիկական գրագիտությունը, բարձրակարգ ու փորձառու ֆուտրովիստների կայացած կոլեկտիվի հոգեբանական և տակտիկական ցնցող միասնությունը, հուսալի պաշտպանությունը, հարձակողական գործողությունների բազմազանությունը, մյուս թիմերի համեմատ եզրափակիչ «խոցումների» բարձր արդյունավետությունը: Թող ամհամեստ չինչի, բայց «Արարատը» 1970-ականների սկզբին ցուցադրում էր այսօրվա լավագույն ֆուտրովը: Համարձակորեն կարող եմ ասել, որ այն ժամանակվա «Արարատն» իր խաղաղությունը 2010-ականների «Բարսեղոնան» էր: Նոյնիսկ կարելի է հակառակն ասել, որ «Բարսեղոնան» «Արարատ 73»-ի խաղն է ցուցադրում:

«Արարատ 73»-ն իրեն գերազանց դրաւերեց նաև եվրոպական մրցասպարեզներում արձանագրելով խորհրդային ֆուտրովի մի քանի ռեկորդ: Անկասկած, «Արարատ 73»-ը ԽՍՀՄ ֆուտրովի պատմության մեջ լավագույն թիմերից էր, եթե ոչ լավագույնը: Անձամբ իսձ համար համաշխարհային ֆուտրովի պատմության մեջ ամենաիդեալական թիմերն են 1970 թ. Բրազիլիայի հավաքականը, 1974 թ. Հոյանդիայի հավաքականը, լավագույն տարիների «Բարսեղոնան» և «Արարատ 73»-ը: Շատերը կարող են ասել, որ այժմյան ֆուտրուն անհամեմատ արագ է: Այս, բայց սա «Արարատին» չի վերաբերում, որովհետև Նրա կազմում խաղում էին Ալոն Խոտոյանի և Նիկոլայ Ղազարյանի պես հրաժիղային արագությամբ ֆուտրովիստներ, պաշտպանությունից հարձակման «Արարատն» անցնում էր երկար փոխանցումներով և կայծակնային արագությամբ:

Հայ ֆուտրուասերներին, որոնք բախտ են ոնեցել դիտելու «Արարատ 73»-ի փայլուն երույթները, այսօր նոյնիսկ ամենաբարձրակարգ խաղով չես զարմացնի: Այս, մենք միջազգային չափամասիներով հրաշալի թիմ ենք ունեցել, ու շատ եմ ափսոսում, որ հնարավորություն չի եղել պահպանելու «Արարատի» խաղերի տեսագրությունները: Ժամանակն էր այդպիսին: Այն տարիներին որևէ մեկը տեսամագնիտոֆոն չուներ, նոյնիսկ ռադիոռեպորտաժների համար ձայնագրիչ չկար: Հեռուստառադիոպետկոմը հոնգարական արտադրության մեծ ու ծանր ձայնագրիչներ ուներ, այն է-

սահմանափակ քանակով, ու դրանցից օգտվելու և ռեպորտաժներ պատրաստելու համար տարբեր բաժինների լրագրողները հերթագրվում էին: Այն ժամանակ գրքառության մեջ էր «Կադր-3»-ը, որը լայնաֆորմատ էր, և մեկ տեսաերիզը 16 կգ էր: Պատկերացնո՞ւմ եր, արտագնա հանդիպումները տեսագրելու համար շալակում էի ընդհանուր մոտ 32 կիլոգրամ քաշ ունեցող երկու տեսաերիզ, և վերադառնալուց եթեր էինք հեռարձակում կարևոր դրվագները կամ ամբողջ խաղը: Այդ տեսաերիզները թիւ էին, հետևաբար խաղերի տեսագրությունը կարելի էր պահել առավելագույնը մեկ շաբաթ, այն էլ եթե օգտագործելու հայտ ներկայացվեր, ինչից հետո նախկին տեսագրությունը ջնջվում էր նույն երիզի վրա նոր հաղորդում տեսագրելու համար: Դա է պատճառը, որ այսօր չկան «Արարատ 73»-ի ֆանտաստիկ երկյաները փաստող տեսագրություններ:

Ես անձամբ ծանոթ չեմ 1960-ականների 2-րդ կեսին «Արարատը» մարզաձ Արտյոմ Ֆայյանին և Ալեքսանդր Պոլոմարյովին, բայց միշտ ներկա էի լինում նրանց անցկացրած պարապմունքներին: Ֆայյանի հետ ծանոթացա 1975-ին, Լենինգրադում, երբ նրա և Հովհաննես Աբրահամյանի հետ դիտում էի «Զենիթ»-«Արարատ» փոխարինողների հանդիպումը: Ֆայյանի խստության և կոշտ ընավորության մասին բազմաթիվ պատմություններ էի յսել, նոյնիսկ ասում էին, որ հյուրանոցում ջուրն անջատել էր տայիս, որպեսզի տղաները շատ ջուր ցնմին: Ըստամենը երկու ժամվա շիման ընթացքում համոզվեցի, որ Արտյոմ Ֆայյանը մեծ ինտելեկտի տեր մարդ էր և պարզապես ֆուտրույային համրագիտարան: Նա նոյնիսկ «Արարատի» փոխարինող կազմի ֆուտրույստներին էր լավ ճանաչում և քաջատեղյակ էր ֆուտրույային նորություններին: Փաստն այն է, որ հենց Ֆայյանը մեր ֆուտրույստներին վարժեցրեց կարգապահության:

Չատերն էին խոսում, որ Ալեքսանդր Պոլոմարյովի մարգումային ծանրաթենվածության շնորհիվ են զարգացել ֆուտրույստների ատելետիզմը, դիմացկունությունը: Նա պայքարել է խաղը տակտիկապես ավելի գրագետ և ավելի հուապի դարձնելու համար: Մինչև դա մեր ֆուտրույստների միակ հաղթաթուղյար տեխնիկական լավ պատրաստությունն էր, և նրանք հաճախ էին չարաշահում անհատական խաղը՝ փոխանցումներով գործելու փոխարեն գործադրելով խարսնը և ամեն տեսակի հնարքները: Բայց Պոլոմարյովը «ջրաղեց» իր արդյունավետ աշխատանքի պտուղները, քանի որ հրավիրվեց գլխավորելու ԽՍՀՄ օլիմպիական հավաքականը:

Այդուհանդերձ, հենց «Պոլումարյովը միանգամից «Արարատի» հինգ խաղացողի՝ Հովհաննես Զանագանյանին, Արկադի Անդրեասյանին, Նորայր Մեսրոպյանին, Սերգեյ Բոնդարենկոյին և Լուսն Խշտոյանին հրավիրեց ԽԱՀՀ օլիմպիական հավաքական, որը Երևանում 5-1 հաջվով ջախջախեց ֆրանսիայի օլիմպիական հավաքականին, և հատկանշական է, որ այդ 5 գրից 4-ը խփեցին մեր ֆուտբոլիստները:

Նիկոլայ Գյերովի և Նիկիտա Սիմոնյանի հետ մոտիկից շփվելու քահսոն ունեցա, աշխատեցի այդ հոյակապ անձնավորությունների ու բարձրակարգ մասնագետների հետ, երկար ճանապարհ անցա՛ Ներկա լինելով արտագնա խաղերին: Միշտ Ներկա էի լինում ոչ միայն մարզումներին, այլև խաղերից առաջ ֆուտբոլիստներին տրվող հրահանգներին: Նույնը շարունակվեց նաև Վիկտոր Մասլովի, Նիկոլայ Գույակի և Իոսիֆ Բեցայի ժամանակ: Դա որպես մեկնաբան կայանալու հարցում մեծ դպրոց էր ինձ համար:

Նիկոլայ Գյերովն ինձ պես շախմատի խենթ էր, և դա էլ լրացնուիչ թեկուն էր մեզ կապում իրար:

Գյերովը ժամանակին մասնակցել էր Մոսկվայի շախմատի առաջնությանը և պրոֆեսիոնալ լավ մակարդակի խաղացող էր: Դիրքային խաղում չէիր կարող դիմադրել նրան, միայն տակտիկական բարդություններով էի փորձում հաջողության հասնել: «Արարատի» ամեն պարապմունքից հետո ինձ հրավիրում էր «Արմենիա» կուգանոցի 502 համարի իր սենյակ, և իրար հետ շախմատ էինք խաղում: Արտագնա հանդիպումների մեկնելին՝ խաղում էինք նույնիսկ օդանավում: Հիշում եմ, որ 1972-ին Դուստրվում տեղի ԲՄԱ-ի հետ խաղող առաջ ֆուտբոլիստներին ցուցումներ տալու և կազմը հայտարարելու ժամը մոտենում էր, իսկ մենք հյուրանոցի նրա սենյակում դեռ շախմատ էինք խաղում: Մեզ մոտեցավ թիմի պետ Ռոբերտ Շաղիկյանը և պահանջեց, որ անձնատուր լինեմ, իսկ ես թեթև ֆիգուրի առավելություն ունեի, և, եթե հանձնվեի, Գյերովը կկարծեր, թե արհամարհում եմ: Ի վերջո, ոչ-ոքի առաջարկեցի, և Գյերովը համաձայնեց:

Ինչո՞ւ մանրամասն անդրադարձա այս դեպքին: Պարզապես ուզում եմ ընդգծել, որ ֆուտբոլը Գյերովի համար շախմատ էր: Նա Խորհրդային Միության ֆուտբոլային լավագույն տեսաբաններից ու տակտիկներից մեկն էր և շատ էր ուզում, որ իր ֆուտբոլիստներն առաջին հերթին մտրով խաղան: Տակտիկական առումով Գյերովը շատ քան տվեց «Արարատին»:

Եվ միանգամայն իրավացի է Հովհաննես Զանազանյանը՝ ասելով. «Գլեթովը մեզ սովորեցրեց միշտ ֆուտբոլ խաղար»: Նա նաև շատ մեծ տեղ էր տակի ֆուտբոլիստների հոգեբանական պատրաստությանը: Յուրաքանչյուրին առանձին-առանձին ներշնչում էր, որ նա որևէ մեկից թույլ չէ: Գլեթովը զարգացրեց Պոնոմարյովի գաղափարները:

1971-ին «Արարատի» խաղն արդեն առանձնանում էր ոչ միայն բարձր կազմակերպվածությամբ, այլև վստահությամբ, տակտիկական բազմազանությամբ, հավասարակշռվածությամբ, ֆուտբոլիստների տրամադրությունից քիչ կախվածությամբ: Այլևս կռնչիկտային իրավիճակները, մրցավարների անարդարությունը չէին կարող հոնմից հանել մեր ֆուտբոլիստներին, ինչը հատկապես շատ էր զգացվում արտագնա խաղերում:

Շատերն այն կարծիքին էին, որ Նիկիտա Սիմոնյանը թիմ եկավ, երբ այն արդեն ամբողջովին պատրաստ էր չեմպիոնական թոփշքին: Տիշտ է, առաջատար ֆուտբոլիստները հասել էին իրենց ուժերի ծաղկման շրջանին, ու հրաշալի մասնագետին ժառանգություն էր հասել կայուն և ուժեղ կազմ: Դա հեշտացրել էր գործը, բայց վերջնականապես չէր լուծել այն: Սիմոնյանը մեծ ջանքեր է գործադրել թիմն ավելի ամրապնդելու համար: Նրա մեծ հեղինակության շնորհիվ զգալիորեն լավացավ մրմուրութը կոլեկտիվում, ինչն ամենակարևորն էր, եթե նկատի ունենալը որոշ բարդություններ, որոնք ստեղծվել էին 1972-ի մրցաշրջանի վերջնամասում, երբ թիմի պետ Ռոբերտ Շաղիկյանի «ջանքերով» անսպասելիորեն պաշտոնանկ արվեց Նիկոլայ Գլեթովը, այն էլ երբ «Արարատը» պատրաստվում էր մեկնել ԳՖՀ «Կայզերսարաուտենի» հետ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության 1/8 եզրափակիչ պատասխան հանդիպման:

Սիմոնյանի մեծ վաստակն է, որ «Արարատը» սկսեց ավելի հուսալի, գրագետ, սանսասիրու ու համախմբված խաղալ պաշտպանությունում՝ չնվազեցնելով իր գրոհային թափը:

Անհամեմատ վստահ էր գործում Ալյոշա Աբրահամյանը, որը կտրուկ բարձրացրեց իր խաղի հուսալիությունը: Ավելի արդյունավետ դարձան «Արարատի» հակագրուները: «Արարատը» կարողանում էր ստեղծված հնարավորություններից առավելագույնը քաղել, ինչը վկայում էր թիմի հասունության ու բարձր կարգի մասին: «Արարատը» խաղում էր ոիթմի փոփոխությամբ, իմպրովիզներով, որոնք աչք էին շոյում: Գրոհները բազ-

մապան էին: Տակտիկական անակսկանները ծուղակի մեջ էին գցում մըրցակիցներին:

Մարգարովն ու Անդրեասյանն իրենց նուրբ տեխնիկայով հմուտ դիրիժորի պես ոչ միայն կազմակերպում էին գրոհները, այլև ժամանակին կարողանում էին դուրս գալ կրակագիծ և եղրափակել գրոհները: Դրանք գուգորդվում էին Զանազանյանի և Բոնդարենկոյի՝ հեռու տարածություններից անսպասելի թնդանոթային հարվածներով, եզրերից հրթիոային արագությամբ Խշտոյանի և Ղազարյանի վտանգավոր ճեղքումներով ու դեպի տուգանային հրապարակ սուր փոխանցումներով...

Մի խոսքով, ես աշխարհի ամենարախտավոր մեկնարանն էի, որ հնարավորություն էի ստացել վարելու այդպիսի կախարդական թիմի խաղերի ռեպորտաժները, ամբողջ ազգն էլ դարձել էր ֆուտրուլասեր: Ծորհակալ եմ Աստծոն՝ ինձ ընծեռած ճակատագրի համար:

Վաղուց էի պատրաստվում հուշերս գրքի վերածել, սակայն, անչափ գրադված լինելով մեկնարանական և լրագրողական գործունեությամբ, առօրյա հոգսերով, ամեն անգամ հետաձգում էի: Բայց երբ լրացավ «Արարատ 73»-ի պանծալի հաղթանակների 40-րդ տարին, հետաձգելն արդեն աններելի կլիներ, քանի որ հուշերը ժամանակի ընթացքում աստիճանաբար ջնջվում են: Եվ որոշեցի գործի անցնել: Հատկանշական է, որ «Արարատ 73»-ի մասին այս գիրքը սկսեցի գրել 73 տարեկանում: Սա ականատեսի անմիջական վկայություն է «Արարատ 73»-ի անոնը հավերժացնելու մղումով և մեր հերիաթային թիմի փառահեղ հաղթանակների պատմությունը հաջորդ սերունդներին փոխանցելու նպատակով:

# «ԱՐԱՐԱՏՈՒՄ» ՅՈՒՐԳԱՎԱԶՋՈՒԹԻ ՖՈՒՏԲՈԼԻՍ ԱՆՎԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐ



Նիկիտա Միմոնյան

Չատ չեն այս թիմերը, որոնք հասել են այնպիսի հաջողությունների, որն ունեցել է Երևանի «Արարատը» 1973 թվականին: ԽՍՀՄ առաջնության գրողեղ թիմերի կողմին «միջակի» համբավ ունեցող թիմերի շարքում, որոնք գրեթե հաջողություններ չեն ունենում «Արարատը» միակն եր, որը «Ռուբ» ձևակերպեց:

Մրցաշրջան 1973-ը բավականին խորհրդանշական էր: Ես թիմ ամենևսին եկ չեկա սին մտքերով ու դատարկ ձեռքերով: Երբ ստանձնեցի «Արարատի» դեկը, արդեն մարզչական աշխատանքի բավականին փորձ ունեի: Կային բազում մտահղացումներ ու գաղափարներ: Ես ֆուտբոլիստներին ծանոթ եի, բայց աշխատանքի ընթացքում ավելի լավ ճանաչեցի նրանց, ու միասին անցանք այն ճանապարհը, որն արդեն հայտնի է բոլորին: Անշափ համեմի էր աշխատել արարատցիների հետ, քանի որ նրանք իմ ֆուտբոլային նախասիրություններն ունեցող խաղացողներ էին: Տղաներն արագավազ էին, մկուն, տեխնիկապես հրաշալի պատրաստված, կոմբինացիոն խաղի սիրահարներ, կարող էին դիմել գիշապուստ գործողությունների և շփոթության մեջ գցել մրցակիցներին:

Պերճախոսություն կիխնի, եթե ասեմ, որ մենք մրցաշրջանից առաջ գիտակցում էինք, որ հաղթելու ենք և՝ առաջնությունում, և՝ գավաթի խաղարկությունում: Այդպես չի եղել:

Մեզ համար միշտ ամենակարևոր հաջորդ խաղն էր: Մենք շարժվում էինք խաղից խաղ: Ցուրաքանչյուր խաղի մեծ կարևորություն էինք տալիս, միմյանց ասում էինք՝ այս խաղը կարևոր է, հաջորդը վճռական է, ու այսպես շարունակ...

Գիրքն ամբողջությամբ

ԱՅՍՏԵՂ